ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

КОММУНИСТ
№ 11, 1966

Ամսագիրը բացվում է «Հնգամյակի սոցիալ-քաղաքական պրոբլեմները» առաջնորդողով։ Նոր հնգամյակում, նշված է այնտեղ, տնտեսական և գիտա-տեխնիկական խոշոր խնդիրների հետ միասին, պետք է իրականացվեն սոցիալ-քաղաքական կարևոր պրոբլեմներ՝ քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների հաղթահարում, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և մտավորականության միջև եղած սոցիալական սահմանների վերացում։

«Քաղաքը և գյուղը» խորագրի տակ տպագրված են Պ. Իգնատովսկու «Սովետական բանվոր դասակարգը», Ի. Բոդյուլի «Քաղաքի և գյուղի միջև եղած էական տարբերությունների հաղթահարման մասին», Ա. Բաչուրինի «Տնտեսական ռեֆորմի ակտուալ պրոբլեմները», Վ. Գոլիկովի «ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումի որոշումները գործողության մեջ» հոդվածները։

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС
№ 7, 1966

Ամսագիրը ունի «Հոդվածներ», «Դեպի մեծ հոկտեմբերի 50-ամյակը», «ՍՄԿԿ պատմության բուրժուական կեղծարարների դեմ», «Հաղորդումներ», «Փաստաթղթեր և նյութեր», «Կոնսուլտացիա», «Նամակներ և թղթակցություններ», «Մարդիկ, իրադարձություններ, փաստեր», «Հիշողություններ», «Պատմագրություն և աղբյուրագիտություն», «Քննադատություն և գրախոսություն», «Գիտական կյանք» բաժինները։

Ն. Ա. Բարսուկովը, Ս. Ռ. Շայդուլինը և Ի. Ն. Յուդինը իրենց «ՍՄԿԿ-ն ինտերնացիոնալ կուսակցություն է» հոդվածում բազմաթիվ փաստերի և մարքսիզմի կլասիկների աշխատությունների հիման վրա բացահայտում են ՍՄԿԿ ինտերնացիոնալ բնույթը։ Հոդվածագիրները նշում են, որ ինտերնացիոնալիզմը, հանդիսանալով բանվոր դասակարգի անբաժան բովանդակությունը, համարվում է նրա մարքս-լենինյան կուսակցության կյանքի և գործունեության կարևորագույն սկզբունքը։ ՍՄԿԿ-ի շարքերում են գտնվում մեր երկրի 131 ազգերի և ժողովուրդների լավագույն զավակները։ Հոդվածում բազմաթիվ փաստեր են բերված Սովետական Միության ազգային հանրապետություններում, մարզերում, երկրամասերում բանվոր դասակարգի, կուսակցության շարքերի աճի մասին։

Սոցիալիստական շինարարության ընթացքում, միութենական և ինքնավար հանրապետությունների, ինքնավար մարզերի և ազգային օկրուգների ստեղծման հետ աճեցին կուսակցական կազմակերպությունները այդ շրջաններում, որոնց հիմնական կորիզը կազմեցին տեղի ազգությունների ներկայացուցիչները։ Բավական է ասել, որ 1937 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում եղած 19 հազար 235 կոմունիստներից 17 հազար 280-ը հայեր էին, կամ 89,9%-ը, Վրաստանում՝ 66,7, Ուկրաինայում՝ 57,1, Բելոռուսիայում՝ 53,3, Ադրբեջանում՝ 44,1 տոկոսը և այլն։

1964 թ. ՍՄԿԿ անդամության թեկնածու ընդունվածների մեջ բնիկ ազգությունների ներկայացուցիչների թիվը կազմում էր՝ Հայաստանում —91,8 տոկոս, Բելոռուսիայում—78,6, Վրաստանում—78,2, Լիտվայում—76,1, Ադրբեջանում—74,4 տոկոս և այլն։

ВОПРОСЫ ФИЛОСОФИИ
№ 6 и № 7, 1966

Ամսագրի 6-րդ համարը սկսվում է Յու. Ի. Պալկինի «Նյութական և բարոյական ազդակների զուգակցումը աշխատանքի նկատմամբ, սոցիալիզմի ժամանակ» հոդվածով, որտեղ մանրամասն վերլուծված են սոցիալիստական

հասարակարգում աշխատանքի նկատմամբ ազդակների բովանդակությունը և համագործակցությունը, աշխատանքի նկատմամբ նյութական և բարոյական ազդակների զուգակցման մի քանի սկզբունքները և հատկանիշները, նյութական և բարոյական ազդակների դերի հարաբերակցումը կոմունիստական շինարարության ժամանակակից էտապում հարցերը։

Հետաքրքրություն են ներկայացնում ամսագրում տպագրված Ի. Վ. Դուդինսկու «Համաշխարհային սոցիալիստական սիստեմում ազգայինի և ինտերնացիոնալի զուգակցման մասին», Ա. Կ. Կուրիլևի և Գ. Մ. Շտրակսի «Մարքսիստական փիլիսոփայությունը և գիտական կոմունիզմը», Ն. Պ. Դուբինինի «Ի. Վ. Միչուրինը և ժամանակակից գենետիկան», Ա. Վ. Շուբնիկովի «Դրական և բացասական թվերի իրավահավասարությունը», Ջոն Լյուիսի (Անգլիա) «Արևմուտքի փիլիսոփայական միտքը մարքսիզմի էպոխայում» և այլ հոդվածները։

Ամսագրի 7-րդ համարը բացվում է Գ. Օ. Զիմանասի «Սոցիալիստական ազգերի մերձեցման պրոցեսի էության մասին» հոդվածով։ Հեղինակը մանրամասն կանգ է առնում սոցիալիստական ազգերի մերձեցման պրոցեսի վրա։ Նա այդ պրոցեսի կարևորագույն լծակներն է համարում արտադրական ուժերի զարգացումը կապված կոմունիստական հասարակական հարաբերությունների հաստատման հետ, ժողովրդի կենսամակարդակի բարձրացումը։

Պ. Ե. Կրյաժևի «Անձի ձևավորման մի քանի սոցիոլոգիական հարցեր» հոդվածում մանրամասն վերլուծվում են այնպիսի պրոբլեմային հարցեր, ինչպիսիք են՝ մարդը, անհատը, անձը, անձի պրոբլեմի սոցիոլոգիական կողմը, հասարակության մեջ անձի հաղորդակցման և զոդման դիալեկտիկան, անձը որպես իր սոցիալական էությունը մարդկային անհատականությամբ յուրացնելու չափ և այլն։

Հետաքրքրություն են ներկայացնում նաև Ա. Մ. Երյոմինի «Արտադրական կապերը սոցիալիստական հասարակարգում», Ա. Ռ. Լուբիայի «Բարձր հոգեկան ֆունկցիաների զարգացման տեսությունը սովետական հոգեբանության մեջ», Լ. Ա. Կոգանի «Մարքսիստական փիլիսոփայության կառուցվածքի մասին», Վլադիսլավ Կրաեվսկու (Լեհաստան) «Պատճառական կապի հինգ հասկացողություն» և այլ հոդվածները։